Մեղադրյալներից 2-ը հանցագործության կատարման պահին եղել են 17 տարեկան, 1-ը՝ 19 տարեկան, 3-ը՝ 20 տարեկան, 5-ը՝ 21 տարեկան, 10-ը՝ 22 տարեկան, 9-ը՝ 23 տարեկան, 4-ը՝ 24 տարեկան, 5-ը՝ 25 տարեկան, 7-ը՝ 26 տարեկան, 2-ը՝ 27 տարեկան, 3-ը՝ 28 տարեկան, 4-ը՝ 29 տարեկան, 1-ը՝ 30 տարեկան, 4-ը՝ 31 տարեկան, 2-ը՝ 33 տարեկան, 2-ը՝ 35 տարեկան, 2-ը՝ 38 տարեկան, 2-ը՝ 39 տարեկան, 2-ը՝ 41 տարեկան, 1-ը՝ 43 տարեկան, 1-ը՝ 44 տարեկան, 1-ը՝ 47 տարեկան, 1-ը՝ 49 տարեկան, 1-ը՝ 51 տարեկան, 2-ը՝ 52 տարեկան, 1-ը՝ 57 տարեկան, 1-ը՝ **86 տարեկան**:

79 կասկածյալներից/մեղադրյալներից 5 եղել են նախկինում դատապարտված, 74-ը՝ ոչ:

Կասկածյալներից/մեղադրյալներից 6-ը եղել են գյուղատնտես, 4-ը՝ բանվոր, 4-ն՝ անասնապահ, 1-ը՝ վարորդ, 1-ը՝ տաքսու վարորդ, 63-ը՝ որևէ զբաղմունք չեն ունեցել:

Հանցագործության կատարման պահին կասկածյալներից/մեղադրյալներից 37-ը տուժողի հետ եղել են փաստացի ամուսիններ, 12-ը՝ անձանոթ, 9-ը՝ հարևաններ, 9-ը՝ ծանոթներ, 5-ը՝ համագյուղացիներ (համաքաղաքացիներ), 2-ը՝ գործատու, 1-ը՝ ընկեր-ընկերուհի, 1-ը՝ մորեղբայր, 1-ը՝ դստեր ամուսին, 1-ը՝ քրոջ ամուսին, 1-ը՝ խորթ հայր:

Հիշյալ 98 քրեական գործերով տուժող եղել են 100 անձինք, որոնցից 3-ն արական, իսկ 97-ն իգական սեռի ներկայացուցիչներ:

Տուժողներից 86-ն ազգությամբ հայ էին, 13-ը՝ եզդի, 1-ը՝ մոլդովացի: Տուժողներից 98-ը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ էին, 1-ը՝ Ռուսաստանի Դաշնության, իսկ 1-ը՝ Մոլդովայի Հանրապետության քաղաքացի:

Հանցագործության կատարման պահին տուժողներից 1-ը եղել է Հ տարեկան, 3-ը՝ 8 տարեկան, 1-ը՝ 9 տարեկան, 1-ը՝ 10 տարեկան, 2-ը՝ 11 տարեկան, 1-ը՝ 12 տարեկան, 3-ը՝ 13 տարեկան, 7-ը՝ 14 տարեկան, 36-ը՝ 15 տարեկան, 16-ը՝ 16 տարեկան, 1-ը՝ 18 տարեկան, 2-ը՝ 19 տարեկան, 2-ը՝ 20 տարեկան, 1-ը՝ 22 տարեկան, 1-ը՝ 25 տարեկան, 1-ը՝ 26 տարեկան, 1-ը՝ 27 տարեկան, 3-ը՝ 28 տարեկան, 2-ը՝ 29 տարեկան, 1-ը՝ 30 տարեկան, 2-ը՝ 31 տարեկան, 3-ը՝ 32 տարեկան, 1-ը՝ 33 տարեկան, 2-ը՝ 35 տարեկան, 1-ը՝ 36 տարեկան, 1-ը՝ 38 տարեկան, 1-ը՝ 49 տարեկան, 1-ը՝ 53 տարեկան, 1-ը՝ 56 տարեկան, 1-ը՝ 74 տարեկան:

Տուժողներից 27-ը եղել են աշակերտներ, 1-ը՝ վաճառող, 1-ը՝ ծառայող, 2-ը՝ թռչակառու, 1-ը՝ ուսանող, 1-ը՝ մարմնավաճառ, 1-ը՝ հողագործ, 2-ը՝ վարձու աշխատողներ, իսկ 64-ը՝ որևէ զբաղմունք չի ունեցել:

Տուժողներ



2015

73 քրեական
գործերով

75
տուժող անձ

74 իգական սեռի
ներկայացուցիչներ

1 արական



2016

98 քրեական
գործերով

100
տուժող անձ

97 իգական սեռի
ներկայացուցիչներ

3 արական



**Տեղեկատվություն 2015
– 2016 թվականների
ընթացքում ՀՀ
քննչական կոմիտեի
զինվորական քննչական
գլխավոր վարչության
քննիչների
քննաժ սեռական
հանցագործությունների
վերաբերյալ**

2015 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության քննիչներն ընդհանուր առմամբ քննել են ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով հարուցված 11 քրեական գործ, որոնցից՝ 3-ը կարճվել են (ընդհանուր գործերի 27,3%), մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 8 քրեական գործ (ընդհանուր գործերի 72,7%):

Քննված 11 քրեական գործերից 2-ը հարուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով, որոնցից 1-ը՝ 138 և 139-րդ հոդվածների 1-ին մասերով (համակցությամբ), 1-ը՝ 2-րդ մասի 3-րդ կետով:

Քննված քրեական գործերից 3-ը հարուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածով, որոնցից՝

- 2-ը՝ 1-ին մասով,
- 1-ը՝ 1-ին մասով, 2-րդ մասի 8-րդ կետով և 140-րդ հոդվածի 1-ին մասով (համակցությամբ):

Քննված քրեական գործերից 1-ը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ի մասով:



Քննված քրեական գործերից 5-ը հարուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, որոնցից՝

- 3-ը՝ 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով,
- 1-ը՝ 2-րդ մասի 3-րդ կետով,
- 1-ը՝ 3-րդ մասի 2-րդ կետով:

Վերոնշյալ 11 քրեական գործերով որպես կասկածյալ/ մեղադրյալ ներգրավվել է 9 անձ, որոնք բոլորն էլ հանդիսացել են արական սեռի ներկայացուցիչներ,



2015թ. ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության քննիչների կողմից քննված քրեական գործեր՝



ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավված 9 անձանց նկատմամբ կիրառվել են խափանման միջոցներ, որոնցից 4-ի նկատմամբ՝ ստորագրություն՝ չիեռանալու մասին, 3-ի նկատմամբ՝ կալանավորում, 2-ի նկատմամբ՝ հրամանատարի հսկողության հանձնում:

9-ը կասկածյալներից/մեղադրյալներից 1-ը հանցագործության կատարման պահին եղել է 19 տարեկան, 2-ը՝ 20 տարեկան, 1-ը՝ 21 տարեկան, 2-ը՝ 22 տարեկան, 1-ը՝ 23 տարեկան, 1-ը՝ 25 տարեկան, 1-ը՝ 33 տարեկան:

9 կասկածյալներից/մեղադրյալներից ոչ մեկը նախկինում դատապարտված չի եղել, բոլորն էլ ծառայողներ:

Հանցագործության կատարման պահին մեղադրյալներից 3-ը հանդիսացել է տուժողի փաստացի ամուսին, 2-ը՝ անձանոթ, 4-ը՝ ծանոթ:

Վերոհիշյալ 11 քրեական գործերով 13 անձինք հանդիսացել են որպես տուժողներ, որոնցից 6-ը՝ արական, իսկ 7-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ են: Բոլորն էլ ազգությամբ եղել են հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Հանցագործության կատարման պահին տուժողներից 3-ը եղել են 14 տարեկան, 3-ը՝ 15 տարեկան, 1-ը՝ 18 տարեկան, 4-ը՝ 20 տարեկան, 1-ը՝ 23 տարեկան, 1-ը՝ 30 տարեկան:

Տուժողներից 5-ը եղել են աշակերտներ, 6-ը՝ ծառայողներ, 2-ը զբաղմունք չեն ունեցել:

2016 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության քննիչներն ընդհանուր առմամբ քննել են ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով հարուցված 13 քրեական գործ, որոնցից՝ 8-ը կարճվել են (ընդհանուր գործերի 61,5%), մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 5 քրեական գործ (ընդհանուր գործերի 38,5%):

Քննված 13 քրեական գործերից 4-ը հարուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով, որոնցից 3-ը՝ 1-ին մասով, իսկ 1-ը՝ 34-138-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 1 քրեական գործ:

ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով հարուցված է եղել 8 քրեական գործ, որոնցից՝



- 1-ը՝ 1-ին մասով,
- 1-ը՝ 2-րդ մասի 1-ին կետով,
- 4-ը՝ 2-րդ մասի 3-րդ կետով,
- 2-ը՝ 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

Վերոնշյալ 13 քրեական գործերով որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավվել է 9 անձ, բոլորն էլ եղել են արական սեռի ներկայացուցիչներ, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավված 9 անձանց նկատմամբ էլ կիրառվել են խափանման միջոցներ, որոնցից 4-ի նկատմամբ՝ ստորագրություն՝ չիեռանալու մասին, 3-ի նկատմամբ՝ հրամանատարի հսկողության հանձնում, 2-ի նկատմամբ՝ կալանավորում:



2016թ. ՀՀ քննչական կոմիտեի գիսվորական քննչական գլխավոր վարչության քննիչների կողմից քննված քրեական գործեր՝



Կասկածյալներից/մեղադրյալներից 2-ը հանցագործության կատարման պահին եղել են 20 տարեկան, 1-ը՝ 21 տարեկան, 3-ը՝ 22 տարեկան, 2-ը՝ 25 տարեկան, 1-ը՝ 49 տարեկան:

9 կասկածյալներից/մեղադրյալներից ոչ մեկը նախկինում դատապարտված չի եղել, բոլորն էլ ծառայողներ:

Հանցագործության կատարման պահին կասկածյալներից/մեղադրյալներից 3-ը եղել են ծանոթ, 2-ը՝ անծանոթ, 1-ը հանդիսացել է տուժողի փաստացի ամուսին, 1-ը՝ ամուսնու ազգական, 2-ը՝ ծանոթ:


Վերոհիշյալ 13 քրեական գործերով տուժող են հանդիսացել 13 անձինք, որոնցից 1-ն՝ արական, իսկ 12-ն իգական սեռի ներկայացուցիչներ էին:

Տուժողներից 13-ն էլ եղել են ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Հանցագործության կատարման պահին տուժողներից 5-ը եղել են 14 տարեկան, 3-ը՝ 15 տարեկան, 1-ը՝ 18 տարեկան, 1-ը՝ 19 տարեկան, 1-ը՝ 26 տարեկան, 1-ը՝ 30 տարեկան, 1-ը՝ 39 տարեկան:

Տուժողներից 5-ը եղել են աշակերտներ, 1-ը՝ ծառայող, 1-ը՝ օպերատոր, 1-ը՝ ուսանող, 5-ը՝ զբաղմունք չի ունեցել:

Կասկածյալ/մեղադրյալ




2015թ. 11 քրեական
գործերով որպես
կասկածյալ/մեղադրյալ
ներգրավվել է 9 անձ:

2016թ. 13 քրեական
գործերով որպես
կասկածյալ/մեղադրյալ
ներգրավվել է 9 անձ:


Տուժողներ



11 քրեական գործերով



13 քրեական գործերով



Քրեական գործերի թիվը

Երևան	Երևան քաղաքի քննչական վարչություն	Ավան և Նոր-Նորք	Արաբկիր	Քանաքեռ-Զեյթուն	Մալաթիա-Սեբաստիա	Էրեբունի և Նուբարաշեն	Կենտրոն և Նորք-Նարաշ	Շենգավիթ	Աջափնյակ և Դավթաշեն	Ընդամենը
Ընդհանուր	2	5	7	2	4	7	9	7	2	45

ՀՀ մարզեր	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Արարատ	Սյունիք	Վայոց ձոր	Գեղարքունիք	Շիրակ	Լոռի	Տավուշ	Ընդամենը
Ընդհանուր	4	22	6	14	3	3	4	4	10	3	73

Քրեական գործերի թիվը

Երևան	Ավան և Նոր-Նորք	Արաբկիր	Քանաքեռ-Զեյթուն	Մալաթիա-Սեբաստիա	Էրեբունի և Նուբարաշեն	Կենտրոն և Նորք-Նարաշ	Շենգավիթ	Աջափնյակ և Դավթաշեն	Ընդամենը
Ընդհանուր	9	2	5	8	3	7	6	5	45

ՀՀ մարզեր	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Արարատ	Սյունիք	Վայոց Ձոր	Գեղարքունիք	Շիրակ	Լոռի	Տավուշ	Ընդամենը
Ընդհանուր	9	26	3	10	7	3	10	10	12	8	98

Քանակական

հետազոտության ամփոփում

և եզրակացություններ

2015–2016թթ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով հարուցված 288 քրեական գործ, որից 157 քրեական գործը 2016թ.-ին, իսկ 131 քրեական գործը՝ 2015թ.-ին: Ինչպես երևում է քննված քրեական գործերի թիվն աճել է 26-ով: Այնուամենայնիվ քանակական տվյալներում առկա են հետաքրքրական տեղեկություններ, մասնավորապես՝

1. 2016թ.-ին նվազել է կարճված քրեական գործերի ն բացարձակ, ն հարաբերական թիվը – եթե 2015թ.-ին կարճվել է 58 քրեական գործ (ընդհանուր գործերի 44,3%), ապա 2016թ.-ին՝ 45-ը (ընդհանուր գործերի 28,7%);
2. 2016թ.-ին ավելացել է մեղադրական եղրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի բացարձակ թիվը – եթե 2015թ.-ին մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 57 քրեական գործ (ընդհանուր գործերի 43,5%), ապա 2016թ.-ին՝ 62 քրեական գործ (ընդհանուր գործերի 39,5%);
3. 2016թ.-ին ավելացել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությունների ն բացարձակ, ն հարաբերական թիվը – եթե 2015թ.-ին բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդություն ներկայացվել է 2 քրեական գործով (ընդհանուր գործերի 1,5%), ապա 2016թ.-ին՝ ներկայացվել է 3 քրեական գործով (ընդհանուր գործերի 1,9%);
4. 2016թ.-ին ավելացել է կասեցված քրեական գործերի ն բացարձակ, ն հարաբերական թիվը – եթե 2015թ.-ին կասեցվել է 14 քրեական գործ (ընդհանուր գործերի

10,7%), ապա 2016թ.-ին՝ 17 քրեական գործ (ընդհանուր գործերի 10,8%):

5. Էական փոփոխությունների է ենթարկվել սեռական հանցագործությունների առանձին տեսակների հարաբերակցությունը, այսպես.

	2015թ.		2016թ.	
ՀՀ քր. օր. 138 հ.	44	33.6%	43	26.8%
ՀՀ քր. օր. 139 հ.	15	11.5%	17	9.6%
ՀՀ քր. օր. 140 հ.	9	6.9%	6	3.8%
ՀՀ քր. օր. 141 հ.	55	42%	77	51%
ՀՀ քր. օր. 142 հ.	8	6%	14	8.8%
Ընդհանուր	131	100%	157	100%

Աղյուսակից ակնհայտ է, որ 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ, էապես ավելացել է երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների թիվը՝ ն՝ ՀՀ քր. օր. 141-րդ հոդվածով, ն՝ ՀՀ քր. օր. 142-րդ հոդվածով:

6. 2016թ.-ին սեռական հանցագործություններով հարուցված քրեական գործերով որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավվել է 113 անձ. բոլորն արական սեռի ներկայացուցիչներ, նրանցից 99-ն ազգությամբ հայ էին, 12-ը՝ եզդի, 1-ը՝ ռուս, 1-ը՝ մոլդովացի: 2015թ.-ին այդ քրեական գործերով որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավվել է 95 անձ. բոլորը նույնպես արական սեռի ներկայացուցիչներ, որոնցից 82-ն ազգությամբ հայ էին, 11-ը՝ եզդի, իսկ 2-ը՝ պարսիկ:
7. 2016թ.-ին որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավված անձանցից 111-ը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ էին, 1-ը՝ Մոլդովայի Հանրապետության, իսկ 1-ը՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, իսկ 2015թ.-ին՝ 91-ը եղել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, 2-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության, 1-ը՝ Սիրիայի Հանրապետության, իսկ 1-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Այսինքն, մեծամասնությունը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ էին (կասկածյալների/մեղադրյալների 97.1%):

8. որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավված անձանց նկատմամբ կիրառված խափանման միջոցներում առկա է հետևյալ պատկերը՝

Խափանման միջոցի տեսակը	2015թ.		2016թ.	
Կալանավորում	17	17.9%	15	13.3%
Ստորագրություն՝ չիեռանալու մասին	59	62.1%	76	67.2%
Գրավ	7	7.4%	5	4.4%
Հրամանատարի հսկողության հանձնել	2	2.1%	3	2.7%
Ծնողի հսկողության հանձնել	4	4.2%	1	0.9%
Չի կիրառվել	6	6.3%	13	11.5%
Ընդհանուր	95	100%	113	100%

Ինչպես երևում է 2016թ.-ին ավելացել է ստորագրություն՝ չիեռանալու մասին խափանման միջոցի կիրառման դեպքերը, սակայն նվազել են կալանավորման և գրավի կիրառման դեպքերը:

9. 2016թ.-ին 113 կասկածյալներից/մեղադրյալներից միայն 7.1% էր եղել նախկինում դատապարտված, իսկ 2015թ.-ին՝ 95 կասկածյալներից/մեղադրյալներից՝ 6.3%-ը: Այսինքն՝ նախկինում դատապարտված անձանց կողմից սեռական հանցագործությունների կատարման դեպքերի աճն աննշան է:

10. Կասկածյալների/մեղադրյալների մեծամասնությունը որևէ զբաղմունք չունեին, մասնաավորապես՝ 2016թ.-ի քրեական գործերով զբաղմունք չունեին կասկածյալների/մեղադրյալների 70%-ը, իսկ 2015թ.-ի՝ 71.6%-ը: Մյուսներն ունեցել են որոշակի զբաղմունք, այդ թվում եղել են՝ գյուղատնտես, վարորդ, անասնապահ, շինարար, ծառայող, ավտոմեքենա վճարող, հսկիչ, ուսանող, բանվոր, ուսուցիչ, աշակերտ, դի ջեյ, առաքիչ, փականագործ:
11. 2016թ.-ին հանցագործության կատարման պահին կասկածյալներից/մեղադրյալներից 43-ը տուժողի հետ եղել են փաստացի ամուսիններ (ընդհանուր կասկածյալների/մեղադրյալների 38,1%), իսկ 2015թ.-ին՝ 30-ը (կասկածյալների/մեղադրյալների 31,6%): Անձանոթ են եղել 35 անձ. 18-ը (2016թ.-ի ընդհանուր կասկածյալների/մեղադրյալների 16%-ը) և 17-ը (2015թ.-ի ընդհանուր կասկածյալների/մեղադրյալների 17.9%-ը): Դա կազմել է կասկածյալների/մեղադրյալների բացարձակ մեծամասնությունը: Այլ կասկածյալներ/մեղադրյալներ տուժողի հետ ունեցել են հետևյալ կապը. հարևաններ, ծանոթներ, համագյուղացիներ (համաքաղաքացիներ), գործատու, ընկեր-ընկերուհի, մորեղբայր, դստեր ամուսին, քրոջ ամուսին, խորթ հայր, հայր, մորեղբոր որդի, հոր ընկեր, մորաքրոջ ամուսին, մոր նախկին ամուսին, հորեղբոր որդի և այլն:
12. 2016թ.-ի 157 քրեական գործերով տուժող են եղել 162 անձինք, որոնցից 11-ն արական, իսկ 151-ն իգական սեռի ներկայացուցիչներ: Տուժողներից 147-ն ազգությամբ հայ էին, 14-ը՝ եզդի, 1-ը՝ մոլդովացի: Տուժողներից 160-ը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ էին, 1-ը՝ Դուսաստանի Դաշնության, իսկ 1-ը՝ Մոլդովայի Հանրապետության քաղաքացի:

2015թ.-ի 131 քրեական գործերով տուժող եղել են 142 անձ, որոնցից 11-ն արական, իսկ 131-ն իգական սեռի ներկայացուցիչներ: Տուժողներից 131-ն ազգությամբ հայ էին, 10-ը՝ եզդի, իսկ 1-ը՝ մարի: Տուժողներից 141-ն եղել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, իսկ 1-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության:

Այսինքն՝ տուժողների մեծամասնությունը կանայք են (ընդհանուր տուժողների 92.7%), Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ (ընդհանուր տուժողների 99%):

13. 2016թ.-ի գործերով տուժողների տարիքը տատանվել է 5 տարեկանից 74 տարեկանը, իսկ 2015թ.-ին՝ 4-ից 62: Սակայն տուժողների մեծամասնությունը 15 տարեկան էին (ընդհանուր տուժողների 30%), իսկ 14-16 տարեկան տուժող երեխաները կազմում էին ընդհանուր տուժողների համարյա կեսը (ընդհանուր տուժողների 48%):
14. Տուժողների մեծամասնությունը որևէ զբաղմունք չունեին, մասնավորապես՝ 2016թ.-ի քրեական գործերով զբաղմունք չունեին տուժողների 58%-ը, իսկ 2015թ.-ի՝ 52%-ը: Տուժողների մեծամասնությունն աշակերտներ էին. 2016թ.-ի քրեական գործերով տուժողների 32.7%-ը, իսկ 2015թ.-ի՝ 42.7%-ը: Այլ տուժողներ վաճառող էին, մարմնավաճառ, թոշակառու, ուսանող, օպերատոր, դեղագործ, խոհարար, հավաքարար, հաշվապահ, պարուսույց, մատուցողուհի և այլն:

Ելնելով քանակական տվյալների ուսումնասիրությունից կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները՝



1. ՀՀ քր. օր.-ի 138-142-րդ հոդվածներով կարճված քրեական գործերի թվի նվազումը վկայում է, որ քննիչներն առավել հանգամանորեն են սկսել իրականացնել այդ գործերի քննությունը՝ բացահայտելով գործի բոլոր հանգամանքները:
2. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությունների թիվը վկայում է, որ անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ անձանց կողմից կատարված արարքների թիվը չնչին չափով, բայց աճում է, ինչը վկայում է նախականիչ աշխատանքների ուժգնացման անհրաժեշտության մասին՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ:
3. 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ, էապես ավելացած՝ երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների թիվը (ՀՀ քր. օր. 141-րդ և 142-րդ հոդվածներով) պահանջում է երեխաների պաշտպանության ուղղությամբ իրականացնել առավել արդյունավետ միջոցներ՝ իրազեկելով երեխաներին և նրանց ծնողներին կամ երեխայի խնամքով կամ դաստիարակությամբ զբաղվող այլ անձանց՝ դեպքերի կանխմանը և բացահայտմանը նպաստող գործողությունների և հնարավոր մեթոդների մասին: Իսկ հաշվի առնելով, որ տուժողների մեծամասնությունը 14-16 տարեկան երեխաներ են (ընդհանուր տուժողների 48%), անհրաժեշտ է այդ տարիքի երեխաների միջավայրում կազմակերպել հատուկ կանխարգելիչ և բացատրական դասընթացներ:
4. Որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավված անձանց նկատմամբ կիրառված խափանման միջոցների ուսումնասիրությունը վկայում է, որ ստորագրություն՝ չհեռանալու մասին խափանման միջոցն առավել հաճախ է կիրառվում, իսկ նրանց կալանավորման դեպքերը 2016թ.-ին 2-ով նվազել են 2015թ.-ի համեմատ: Ընդհանուր առմամբ, ընդունելով կալանավորումը որպես բացարձակ խափանման միջոց կիրառելը և պրակտիկայում կալանավորումների

թվի նվազման միտումը, այնուամենայնիվ սեռական հանցագործությունների դեպքում, առավել ևս, եթե դրանք կատարվել են երեխայի նկատմամբ, կալանավորումը պետք է քննարկվի նաև տուժողի, առավելապես՝ երեխայի իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից՝ բացառելով ենթադրյալ հանցագործի կողմից նոր հանցագործությունների կատարումը:



5. Կասկածյալների/մեղադրյալների և տուժողների որևէ զբաղմունք չունենալը հանդիսանում է նպաստավոր պայման սեռական հանցագործությունների կատարման համար, ինչից ելնելով ցանկալի է առաջնահերթ ապահովել նրանց զբաղվածությունը՝ աշխատանքի, ուսման կամ այլ հանրօգուտ գործունեության մեջ ներգրավվելով:
6. Հաշվի առնելով երեխաների հետ փաստական ամուսնության դեպքերի ավելացումը, անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ իրազեկման աշխատանքներ՝ երեխաների ամուսնական տարիքի, անչափահասների հղիության և հարակից այլ հարցերի վերաբերյալ՝ ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց գրագետ ներկայացնելով իրավական, բժշկական, հոգեբանական, բարոյական այն բացասական հետևանքները, որոնք կարող են առաջանալ վաղ ամուսնությունների դեպքում:



2015թ. ՀՀ քննչական կոմիտեի քննիչների կողմից քննված ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով հարուցված քրեական գործեր՝



Անչափահաս Տուժողներ



Որակական վերլուծության ամփոփում և Եզրակացություններ

Ինչպես արդեն նշվել է, 2015–2016թթ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններով ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննված քրեական գործերից կարճվել է 103-ը: Կարճված 103 գործերից 58-ը կարճվել են 2015թ.-ին, իսկ 45-ը՝ 2016թ.-ին: Հետազոտության որակական մասում ուսումնասիրվել են 2016թ.-ին կարճված 45 գործերից 38-ը (կարճված գործերի 84,4%): Որպես հետազոտության որակական մասի ուսումնասիրման առարկա հանդիսացել են քրեաիրավական, քրեադատավարական և կրիմինալիստիկական բնույթի խնդիրները:

Ուսումնասիրված կարճված քրեական գործերով հանցագործության մասին հաղորդում տվող անձինք ներգրավված էին որպես տուժող և գործերի մեծ մասում առկա էին որոշումներ անձանց մեղադրյալ ներգրավելու մասին: Նշենք, որ ուսումնասիրված 38 գործերից միայն 4 գործերում (ընդհանուր գործերի 10,5%) է ներգրավված եղել տուժողի ներկայացուցիչ: Այսինքն՝ իրավաբանական օգնություն և խորհրդատվություն ստանալու դեպքերը սակավ են, ինչը տուժողներին չի ընձեռում իրական հնարավորություն՝ արդյունավետ ներկայանալու քրեական դատավարությունում: Քանի որ ուսումնասիրությունն իրականացվել է հնարավոր երեք ոլորտային խնդիրներ բացահայտելու ուղղությամբ (քրեաիրավական, քրեադատավարական և կրիմինալիստիկական), դրանք կներկայացվեն առանձնացված:

Քրեաիրավական

Որոշ քրեական գործերի (օրինակ, քրեական գործեր թիվ 17188516, 40105616 և այլն) փաստական տվյալներից պարզ է, որ մեղադրյալները փաստացի ամուսնացել են անչափահասների հետ և դրանից հետո են սեռական հարաբերություն ունեցել վերջիններս հետ:

Վերը նշված քրեական գործերով պարզվել է, որ մեղադրյալը չի իմացել տուժողի տարիքի մասին, սակայն նույնը հնարավոր չէ պնդել տուժողի ծնողների կամ այլ մերձավորների առնչությամբ, ովքեր ամուսնացնում են իրենց դստերը կամ բարեկամուհուն՝ հաստատապես իմանալով նրա՝ ամուսնական տարիքի հասած չլինելու և սեռական անձեռնմխելիության տարիքում գտնվելու փաստերի մասին: Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով հարուցված քրեական գործերով անչափահասները 12-16 տարեկան են, և նրանց կամարտահայտությունը չի կարող դիտարկվել որպես ամբողջական, կշռադատված և գիտակցված, ապա հնարավոր է քննարկել նաև հարկադիր ամուսնության իրավիճակը, որը 1956թ.-ի ՄԱԿ-ի Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիայի 1-ին հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն համարվում է ստրկությանը հավասարազոր վիճակ: Որպես այդպիսին է համարվում ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ դրամով կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել կամ ամուսնացնում են այդ կնոջը՝ առանց նրան մերժելու իրավունք վերապահելու:

Բացի այդ, ՄԱԿ-ի Ստրկության մասին 1926թ.-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ստրկությունը այն անձի վիճակն է կամ դրությունը, ում նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշակի լիազորությունները (տնօրինում, տիրապետում կամ

օգտագործում): Եռյակ իրավունքներից որևէ մեկի կատարումն անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով համարվում է ստրկություն: Երեխաների պարագայում որպես կանոն գործում է կամքն անտեսելու տարբերակը, քանի որ երեխան չի կարող հայտնել իր կամքը՝ տարիքի, մտածելակերպի, ծնողներից կախվածության կամ այլ հանգամանքներից ելնելով:

1956թ.-ի ՄԱԿ-ի Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիայի 1-ին հոդվածը, ի թիվս այլոց, ստրկությանը հավասարազոր վիճակ է համարում նաև ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով երեխան (մինչև 18 տարեկան անձը) ծնողների կամ նրանցից մեկի կամ ինամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով:⁶

Այսինքն՝ կոնվենցիան տարանջատում է երեխայի աշխատանքի շահագործումը և երեխա լինելու հանգամանքի շահագործումը, որի դեպքում երեխան կարող է որևէ ակտիվ վարքագիծ չդրսևորի: Հետևաբար, եթե երեխան ակտիվ գործողություններ չի իրականացնում, բայց նրա պասիվ գտնվելու հանգամանքն այնուամենայնիվ հանգեցնում է որևէ մեկի կողմից եկամուտ ստանալուն կամ այլ եղանակով շահագործելուն, և այդ անձը գիտակցում է երեխայի առկայության հետևանքով գումարային կամ այլ առավելություններ կամ հավելյալ եկամուտ ստանալու փաստը, ապա այդ անձը շահագործում է երեխային՝ նրա երեխա լինելը շահարկելով:

⁶ ՄԱԿ-ի Ստրկության մասին 1926թ.-ի և Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին 1956թ.-ի լրացուցիչ կոնվենցիաները ՀՀ-ը դեռ չի վավերացրել, սակայն վավերացված երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 2005թ.-ի ԱՄԿ 182-րդ կոնվենցիան ուղղակիորեն շեշտում է ն ստրկությունը, ն ստրկությանը հավասարազոր վիճակները որպես երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր: Հարկ է նշել, որ ՄԻԵԿ-ի 4-րդ հոդվածը մեկնաբանելիս ՄԻԵԴ-ը կիրառում է վերը նշված կոնվենցիաները:

Երեխայի ծնողի/ խնամակալի կողմից երեխային որևէ անձին փոխանցելը կարող է իրականացվել վարձատրությամբ կամ առանց դրա, ինչն ինքնին չի անդրադառնում կատարված արարքի բնույթի վրա: Բոլոր դեպքերում ծնողը/ խնամակալը, օգտվելով երեխայի նկատմամբ ունեցած վերահսկողական լիազորություններից, այն օգտագործում է ի վնաս երեխայի շահերին՝ վերաբերելով երեխային որպես գույքի՝ ժամանակավորապես կամ մշտապես հանձնելով նրան այլ անձանց տիրապետման՝ շահագործման նպատակով: Բացի այդ, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 2005թ.-ի ՄԱԿ-ի 182-րդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերն ընդգրկում են՝

- ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը.....,
- բ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը՝ հակաիրավական գործունեությամբ զբաղվելու.....:

Միջազգային այս նորմերը ստեղծում են իրավական հիմք, ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով գործերի քննության ընթացքում առանձին անդրադառնալ ծնողների գործողությանը, և նրանց արարքին տալ քրեաիրավական գնահատական, եթե նրանք կատարել են վերը նշված գործողություններից որևէ մեկը կամ հանդիսացել են ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակից՝ կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող:

Քրեադատավարական

1. Ուսումնասիրված քրեական գործերից որևէ մեկով տուժողը չի ուղարկվել դատահոգեբանական փորձաքննության: Ավելին, դեպքերից մեկով (քրեական գործ թիվ 09111016) տուժողն աջակցություն և օգնություն էր ստանում

հասարակական կազմակերպության կողմից և ներգրավված փաստաբանի կողմից միջնորդություն էր ներկայացվել փորձաքննություն նշանակելու մասին, սակայն այն մերժվել էր քննիչի կողմից: Նշված քրեական գործի շրջանակներում տուժողն իրավապահ մարմիններին դիմել էր դեպքից 6 ամիս հետո և ծանր հոգեբանական վիճակում էր, ընդհուպ 2 անգամ կատարել էր ինքնասպանության փորձ և գտնվում էր հոգեբանների հսկողության ներքո: Միջնորդությամբ առաջարկվել էր փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը՝

- 1) արդյոք տուժողի հոգեկան տառապանքները սկսվել են նրա նկատմամբ տեղի ունեցած սեռական ոտնձգություններից, թե՛ ոչ, (...),
- 2) ներկայումս տուժողն ինչպիսի՞ հոգեկան վիճակում է գտնվում և այդ վիճակը կարո՞ղ է հետևանք լինել իր նկատմամբ 2015թ.-ին տեղի ունեցած բռնաբարության փորձերի և բռնաբարության (...),
- 3) ի՞նչ հանգամանքներով են պայմանավորված տուժողի կողմից կատարված ինքնասպանության փորձերը և դրանք կարող են հետևանք լինել հոգեբանական տրավմայի՝ բռնաբարության փորձերի և բռնաբարության:

Ընդունելով, որ հանցագործության մասին ուշ տեղեկացնելու հանգամանքն ինքնին դժվարացնում է հանցագործության դեպքի պարզումը, դատահոգեբանական փորձաքննության եզրակացության և այլ ապացույցների միջոցով միգուցե հնարավոր կլիներ պարզելու և բացահայտելու, թե ինչո՞վ է պայմանավորված տուժողի մոտ ինքնասպանության փորձերի կատարումը: Եթե փորձագետը վերը նշված հարցադրումներին տար դրական պատասխան, ապա այդ ապացույցը, համադրելով գործում առկա այլ ապացույցների հետ, հիմք կհանդիսանար գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզմանը:

Նման դեպքերում քննիչը բոլոր հնարավոր միջոցները

պետք է ձեռնարկի հանցագործության հանգամանքները պարզելու համար:

2. Ուսումնասիրված գործերից մեկում (քրեական գործ թիվ 56200216) բռնություն էր տեղի ունեցել եղբոր կողմից քրոջ նկատմամբ. տվյալ գործով առերևույթ հանցագործություն կատարած անձը հանդիսանում է ընտանիքի անդամ՝ անչափահաս երեխայի հարազատ եղբայրը, իսկ նրանց մայրը ճանաչվել էր տուժող երեխայի օրինական ներկայացուցիչ: Այստեղ կարևոր է հասկանալ, թե որքանով է օբյեկտիվ օրինական ներկայացուցիչ դարձնել տվյալ երեխաների մորը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մայրը չի կարող օբյեկտիվ ներկայացնել երեխայի շահը, քանի որ առերևույթ հանցագործություն կատարող անձը նույնպես իր երեխան է: Այս դեպքում առկա է օրենսդրական բաց, որի լուծման համար անհրաժեշտ է նախատեսել ծնողների՝ որպես օրինական ներկայացուցիչ չներգրավելու դեպքեր, եթե դա հակասում է երեխայի լավագույն շահին կամ արդարադատության շահերին:
3. Բոլոր քրեական գործերով անչափահասների հարցաքննության ժամանակ ներգրավվել են մանկավարժներ, սակայն, այն թե ինչ մասնագիտացում և հմտություններ ունեն տվյալ անձինք առանձին չի ուսումնասիրվել կամ կարևորվել (օրենքը նման պահանջ չի էլ նախատեսում): Մանկավարժների ներգրավումը քննչական գործողություններին երբեմն կրել է ձևական բնույթ և չի պարզվել մանկավարժների գիտելիքի, մասնագիտական հմտությունների և նման դեպքերի հետ առնչության փորձի առկայությունը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական

(կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

Սակայն հատկապես սեռական հանցագործությունից տուժած անչափահասների գործերով մանկավարժների մասնակցության առումով ցանկալի է ներգրավել իրավական գիտելիքներ ունեցող մանկավարժներ կամ մանկավարժներ, ովքեր դարձրվում դասավանդում են իրավագիտություն կամ իրավունքին առնչվող այլ առարկա, կամ հոգեբան-մանկավարժ են:

Կրիմինալիստիկական

1. Երբ սեռական հանցագործության մասին հաղորդում է ներկայացնում չափահաս կին, քննիչների կողմից ձեռնարկվող առաջին քայլերից է լինում նրա բարոյական բնութագրի պահանջը ոստիկանության համապատասխան ստորաբաժանումից: Կնոջ բարոյական բնութագրի ստացման նպատակով հարցեր են տրվում նաև հարցաքննությունների ժամանակ: Ոստիկանությանն ուղղված հարցադրումները և ոստիկանության պատասխանները պետք է դիտարկել բովանդակային տեսանկյունից և վերաբերելիության համատեքստում: Ոստիկաններին տրվում են այնպիսի հարցադրումներ, որոնց պատասխանները ոստիկանները չեն կարող տալ ո՛չ ի պաշտոնե, ո՛չ էլ մասնագիտական տեսանկյունից: Հետևաբար, հարցադրումները պետք է լինեն նպատակային և ողջամիտ:
2. Որոշ քրեական գործերով պատշաճ չի պլանավորվում տուժողի հարցաքննությունը, մասնավորապես՝ նախապես չեն կուտակում ամբողջական տեղեկատվություն դեպքի և տուժողի մասին, ինչն անդրադառնում է հարցաքննության որակի և տևողության վրա: Որոշ քրեական գործերում քննիչի կողմից տրված որոշ հարցերը մեղադրող բնույթ ունեն կամ հարցը պարունակում էր որոշակի իրավիճակի գնահատականներ: Այսպես.

1) Քրեական գործ թիվ 51104316 «Դուք տարօրինակ չեք համարում Ձեր այն պահվածքը, որ տվյալ օրը տվյալ ժամին, երբ Ձեր հարևանը նախ եկել է Ձեր տուն, ուտելիք և օղի պահանջել, փոխանակ դուք պահանջելիք, որ նա դուրս գար Ձեր տանից, անգամ աղմուկ բարձրացնելով և թեկուզ հարևանները գային և օգնեին Ձեզ նրան դուրս հանել Ձեր տանից, այլ սեղան եք սարքել, նա էլ առիթավորվել է և պահանջել սեռական հարաբերություն:

Եթե հարևաններից էիք ամաչում, չէիք մտածում, որ ոստիկանություն դիմելու դեպքում իրենք՝ հարևանները միևնույնն է իմանալու էին այս պատմության մասին:

Որն է իրականությունը:

Միթե չէիք կանխատեսում, որ Ձեր նման պահվածքի արդյունքում նրա հաջորդ քայլը լինելու է սեռական հարաբերություն ունենալու պահանջը»:

2) Քրեական գործով թիվ 90956716 քննիչը հարց է ուղղել տուժողին. «Ինչպես է ստացվում, որ դուք գտնվել եք մտերիմ հարաբերությունների մեջ, միասին հաճախ այլուհուլ եք օգտագործել, սակայն նա Ձեր կամքին հակառակ է սեռական հարաբերություն ունեցել Ձեր հետ»:

«Եթե չէիք ցանկանում սեռական հարաբերություն ունենալ, ապա ինչու էիք նրա հետ մտերմություն անում կամ առհասարակ շփվում»:

Նման կտրուկ և գնահատողական դատողություններից ցանկալի է խուսափել՝ դրսևորելով զոհակենտրոն մոտեցում տուժողի նկատմամբ:

3. Ինչպես արդեն նշվել է, որոշ քրեական գործերի քննության ընթացքում մեղադրյալն ակնհայտ 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն ունենալու դեպքով հարցաքննության ժամանակ պնդել է, որ տեղյակ չի եղել տուժողի տարիքի մասին կամ որ տուժողը նրան ասել է 16 տարին լրացած լինելու մասին: Որոշ գործերով (քրեական գործեր թիվ 91163816, 31100316) տուժողներն իրենց ցուցմունքում նշում են, ապա նաև առերես պնդում, որ մեղադրյալին

ասել են, որ դեռ 16 տարին չի լրացել: Քանի որ նման գործերում լրացուցիչ ոչ մի այլ ապացույց չկա, ապա քրեական գործերը կարճվում են: Նման իրավիճակում հնարավորինս պետք է ձեռնարկել այլ լրացուցիչ գործողություններ՝ նպատակ հետապնդելով ձեռք բերել հավելյալ տվյալներ՝ մեղադրյալի կողմից տուժողի տարիքի իմացության փաստը հաստատելու համար:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է եզրակացնել հետևյալը՝

1. Սեռական բռնության ենթարկված անձինք, ըստ ուսումնասիրված գործերի, հաղորդումներ են ներկայացնում դեպքից բավական ժամանակ անց (օրինակ՝ քրեական գործ թիվ 09111016): Դա պայմանավորված է նրանով, որ սեռական բռնությունն անձին լուրջ հոգեբանական տրավմա է հասցնում: Սեռական բռնության արդյունքում անձն ունենում է սեփական մտքերի և զգացմունքների կարգավորման, կրկին կյանքում գործելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանց համար պատասխանատվություն կրելու համար ժամանակի կարիք և, երբ պատրաստ է լինում բարձրաձայնել դեպքի մասին՝ դատաբժշկական փորձաքննությունը որևէ արդյունք չի տալիս, քանի որ ֆիզիկական հետևանքները վերացված կամ ապաքինված են լինում, և ապացույցներ ձեռք բերելը դառնում է լուրջ խնդիր: Նման դեպքերում հնարավոր է, որ սեռական բռնության ենթարկված անձինք ենթարկվեն դատահոգեբանական փորձաքննության, քանի որ անձի հետ կատարված սեռական բռնության հոգեբանական հետևանքների ուսումնասիրությունը, հետտրավմատիկ սթրեսային խանգարումների առկայությունը կարող են լրացնել ապացույցների բազան:
2. Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քննիչները որոշ դեպքերում սեռական հանցագործությունների տուժող չափահաս կանանց նկատմամբ դրսևորում են ոչ

«գոհակենտրոն» վերաբերմունք: Հարցաքննությունների ժամանակ տրվում են գնահատականներ, անձի վարքի վերաբերյալ ենթադրություններ, որոնք կարող են նպաստել անձի երկրորդային զոհացմանը: Սեռական հանցագործությունների քննության դեպքերի քննարկումները և տուժողների տեսանկյունից հարցերի և ձևակերպումների ընկալման ներկայացումը կարող են նպաստել վերաբերմունքի փոփոխմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի արդյունավետ քննությանը:

3. Ուսումնասիրությունից երևում է, որ տուժողի ծնողների կամ այլ մերձավոր ազգականների, ովքեր ամուսնացում են իրենց 13–14 տարեկան դստերին կամ բարեկամներին, արարքներն անգամ չեն հանդիսանում քննության առարկա՝ նրանց արարքում երեխայի շահագործման, երեխայի կամքին հակառակ նրան ամուսնացնելու, բռնություն, անտեսում կամ այլ հակաիրավական գործողություններ կիրառելու առնչությամբ:
4. Անչափահասների հարցաքննության ժամանակ, հատկապես այն դեպքերում, երբ անչափահասի 16 տարեկանը դեռ չի լրացել, և նա կաշկանդվում է խոսել կատարվածի մասին ծնողի ներկայությամբ, երբ ծնողը և մեղադրյալը զուգընկերներ են, մերձավոր ազգականներ կամ ծանոթներ, պետք է քննարկվի՝ ելնելով երեխայի լավագույն շահից և ձևավորված միջազգային պրակտիկայից, այդ օրինական ներկայացուցչին բացարկելու և այլ օրինական ներկայացուցչի ներգրավվելու հարցի օրենսդրական կարգավորումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ նախատեսելով:
5. Անչափահասների գործերով հարցաքննությունների ժամանակ պարտադիր է մանկավարժի մասնակցությունը և ուսումնասիրված բոլոր գործերով մանկավարժները ներկա էին, սակայն գործնականում ցանկալի է ներգրավել այնպիսի մանկավարժներ, ովքեր մանկավարժ-հոգեբան

են կամ ունեն իրավական պատշաճ գիտելիքներ:
Այս դեպքում, մանկավարժների ներգրավումը չի
լինի ձևական, այլ նրանք իրենց գիտելիքներով ու
հմտություններով կաջակցեն քննությանը:



